

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2023 թվականի
 սեպտեմբերի 14-ի N 1597 - Ա որոշման

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ
 ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ (ՇԺԵ-2) ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

NN ը/կ	Աշխատանքների անվանումը	Աշխատանքների ավարտման ժամկետները
I ՓՈՒԼ (2022 – 2024) Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման տեխնիկական հնարավորության գնահատում		
1.	Համալիր հետազոտություն	
1.1.	«Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման» որակի ապահովման ծրագրի (ՇԺԵ-2 ՈԱԾ) մշակում:	Կատարված է: ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1085-Ն որոշման պահանջների համաձայն, ՇԺԵ աշխատանքները պետք է սկսել շահագործման ժամկետի ավարտից (2026թ) առնվազն չորս

		տարի առաջ (համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ՄԱԿ Կոմիտե): Այդ իսկ պատճառով աշխատանքների ժամկետները նշված են 2022 թ-ից:
1.2.	Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր հետազոտության իրականացման մեթոդաբանության վերանայում:	Կատարված է
1.3.	Նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի (ՆՏՓ) վերլուծության կատարում և ՇԺԵ-2-ի համար կիրառելի ՆՏՓ-երի ցանկի մշակում՝ ներառյալ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի համալիր հետազոտության անցկացման ՆՏՓ-երը:	Կատարված է
1.4.	Սարքավորումների (ՀԿԲ-երի) ցանկի վերանայում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի համալիր հետազոտության անցկացման համար	Կատարված է
1.5.	Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի համալիր հետազոտության ընդհանուր ծրագրի մշակում:	Կատարված է
1.6.	Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ՀԿԲ-երի տարրերի հետազոտության, տեխնիկական վիճակի գնահատման և մնացորդային ռեսուրսի հիմնավորման աշխատանքային ծրագրերի մշակում:	Կատարված է
1.6.1.	Տարրերի տեխնիկական վիճակի գնահատում, որի ընթացքում պետք է կատարվեն՝	
1.6.1.1.	Տարրերի շահագործման ռեժիմների վերլուծություն:	
1.6.1.2.	Տարրերի տեխնիկական սպասարկման և վերանորոգման արդյունքների վերլուծություն:	28.08.2024 թ.

1.6.1.3.	Շրջակա միջավայրի խիստ պայմաններում աշխատելու համար ատեստավորման աշխատանքների արդյունքների վերլուծություն:	
1.6.1.4.	Մետաղի հետազոտության արդյունքների վերլուծություն:	
1.6.1.5.	Հուսալիության և ամրության տվյալները հաստատող հաշվարկների կատարում:	
1.6.1.6.	Լրացուցիչ փորձարկումների իրականացում:	
1.6.2.	Ռեսուրսը սպառած և փոխարինման ենթակա տարրերի որոշում:	
1.6.3.	Այն տարրերի որոշում, որոնց ռեսուրսի կառավարումն իրականացվում է պարբերաբար կատարվող տեխնիկական սպասարկմամբ և վերանորոգմամբ:	
1.6.4.	Չփոխարինվող և չվերականգնվող տարրերի որոշում և նրանց մնացորդային ռեսուրսի նախնական գնահատման իրականացում:	
1.6.4.1.	Հետազոտվող տարրերի ծերացման մեխանիզմների և նրանց ինտենսիվության որոշում:	
1.6.4.2.	Տարրերի վերահսկում (կամ վերահսկման ներդրման հնարավորություն)՝ մինչև սահմանային վիճակի հասնելը տարրերի բնութագրերի վատթարացման հայտնաբերման հնարավորություն ապահովելու նպատակով:	
1.6.5.	Այն չփոխարինվող և չվերականգնվող տարրերի որոշում, որոնց տեխնիկական վիճակի և մնացորդային ռեսուրսի գնահատման համար անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանքների իրականացում կամ ռեսուրսի կառավարման ծրագրերի մշակում (ծերացման կառավարման ծրագրեր):	
1.6.6.	Մնացորդային ռեսուրս ունեցող այն փոխարինվող տարրերի որոշում, որոնց շահագործման ժամկետը հնարավոր է երկարացնել:	
1.6.7.	Էներգաբլոկի շահագործման ժամկետը սահմանափակող չփոխարինվող և չվերականգնվող տարրերի որոշում՝ ներառյալ այն տարրերը, որոնց ռեսուրսը սպառվում է շահագործման	

	նախագծային կամ լրացուցիչ ժամկետում կամ նշված ժամկետների համար պահանջվում է լրացուցիչ գնահատում:	
1.6.8.	Շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացած աշխատած միջուկային վառելիքի (ԱՄԿ) պահման հնարավորության որոշում:	
1.6.9.	Շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացած ճառագայթաակտիվ թափոնների (ՃԱԹ) անվտանգ կառավարման հնարավորության որոշում:	
1.7.	Համալիր հետազոտության հաշվետվության մշակում՝ համաձայն ՀՀ ՄԱԿ Կոմիտեի նախագահի №9 հրամանի:	01.11.2024 թ.
1.8.	Շենքերի ու շինությունների՝ նախագծային ժամկետի սահմաններից դուրս շահագործման հնարավորության հաշվարկային հիմնավորում:	29.12.2024 թ.
1.9.	Համալիր հետազոտության հաշվետվության համաձայնեցում ՀՀ ՄԱԿ Կոմիտեի հետ:	10.12.2024 թ.
2.	Էներգաբլոկի անվտանգության գնահատում	
2.1.	ԳՇԽ ցանկացած մասում Դy 200մմ համարժեք տրամագծով արտահոսքի փոխհատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցառումների որոշում հաշվարկային մեթոդով՝ հաշվի առնելով եզակի խափանման սկզբունքը:	01.03.2024 թ.
2.2.	ՌԿ անվտանգ կանգի և հովացման, շրջակա միջավայր ճառագայթաակտիվ արտանետումների վերահսկման և տեղայնացման վրա հրդեհների ազդեցության վերլուծության կատարում: Հաշվետվության մշակում	01.04.2024 թ.
2.3.	Ատոմային էներգետիկայի բնագավառում գործող ՆՏՓ-երի պահանջներից Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի նախագծի և փաստացի վիճակի շեղումների բացահայտում. – ՆՏՓ-երի ընդհանուր ցանկի որոշում, որի համաձայն անհրաժեշտ է անցկացնել անհամապատասխանությունների վերլուծություն, և դրա համեմատումը ՆՏՓ-երի այն ցանկի հետ, որը կիրառվել է առաջին երկարաձգման ընթացքում անհամապատասխանությունների վերլուծության կատարման ժամանակ,	01.05.2024 թ.

	<ul style="list-style-type: none"> - Կարգավորող մարմնի կողմից նոր նշված ՆՏՓ-երի պահանջներից Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի փաստացի վիճակի շեղման վերլուծության կատարում, - էներգաբլոկի փաստացի վիճակի գնահատում՝ հաշվի առնելով մինչև 2026 թվականը երկարաձգման ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների վերացման կամ փոխհատուցման նպատակով իրականացված միջոցառումները, - Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի անվտանգության գնահատման հաշվետվության մշակում 	
2.4.	1-ին և 2-րդ մակարդակների Անվտանգության հավանականային վերլուծության վերանայում	01.05.2024 թ.
2.5.	Անվտանգության բարձրացմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների մշակում ՇԺԵ-2-ի համար՝ կատարված անհամապատասխանությունների վերլուծության արդյունքների հիման վրա:	01.08.2024 թ.
2.6.	Հայկական ԱԷԿ-ի՝ հրդեհային անվտանգության մասով արդիականացման միջոցառումների մշակում (կատարվում է ՌԿ անվտանգ կանգի և հովացման, շրջակա միջավայր ճառագայթաակտիվ արտանետումների վերահսկման և տեղայնացման վրա հրդեհների ազդեցության վերլուծության արդյունքների հիման վրա):	01.06.2024 թ.
3.	ՇԼԺ-2-ին նախապատրաստվելու ծրագիր	
3.1.	<p>ՇԼԺ-2 ծրագրի մշակում, որում պետք է ներկայացված լինեն.</p> <ul style="list-style-type: none"> - շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի անվտանգության ապահովման տեխնիկական միջոցառումներ, - ռեսուրսը սպառած տարրերի փոխարինման միջոցառումներ, - չվերականգնվող և չփոխարինվող տարրերի անվտանգության հիմնավորման աշխատանքներ, - ՇԼԺ-2 ժամանակահատվածում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի անվտանգության հիմնավորման աշխատանքներ, - համակարգերի (տարրերի) մոնտաժման և փորձարկման աշխատանքներ, - շահագործական և անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի վերանայում, - ծերացման կառավարման և տեխնիկական սպասարկման և վերանորոգման փաստաթղթերի վերանայում, - շահագործման անձնակազմի վերապատրաստում: 	01.12.2024 թ.

4.	ՇԺԵ-2-ին Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի նախապատրաստման ֆինանսական ծախսերի նախնական գնահատում	
4.1.	Այն սարքավորումների ցանկերի վերլուծությունը, որոնց ձեռքբերումն անհրաժեշտ է տարրերի փոխարինման, համակարգերի արդիականացման և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար: Նախնական գնահատում՝ ըստ յուրաքանչյուր ցանկի:	Կատարված է
4.2.	Տարրերի փոխարինման, չփոխարինվող բաղադրամասերի ռեսուրսի երկարացման հիմնավորման, համակարգերի արդիականացման և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման՝ կատարման ենթակա աշխատանքների ծավալի, կազմի, բովանդակության վերլուծություն: Նախնական գնահատում՝ ըստ յուրաքանչյուր ուղղության	Կատարված է
4.3.	ՇԺԵ-2 –ի հետ կապված անհրաժեշտ ֆինանսական ծախսերի նախնական գնահատում:	Կատարված է
4.4.	Համաձայն ՀՀ կառավարության 2023թ. մարտի 23-ի N°393-Ա որոշման 2.4) կետի՝ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման առաջին փուլի աշխատանքների ավարտից հետո վերանայել «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման իրականացման» աշխատանքային ծրագիրը՝ անհրաժեշտ աշխատանքների կատարումը և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը հստակեցնելու նպատակով:	01.12.2024 թ.
4.5.	Շահագործման լրացուցիչ ժամկետի և էներգաբլոկը դրան նախապատրաստելու վերաբերյալ որոշման ընդունում՝ համաձայն առաջին փուլի աշխատանքների արդյունքների	30.12.2024 թ.
II ՓՈՒԼ (2024 – 2026) Հայկական ԱԷԿ-ի էներգաբլոկը ՇԼԺ-2-ին նախապատրաստելու ծրագրի իրականացում		
5.	Չփոխարինվող և չվերականգնվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորում	

5.1.	Ջերմահիդրավիկ հաշվարկների տվյալների ինժեներական բազայի ակտուալացում:	01.11.2024 թ.
5.2.	«Հետազոտման, տեխնիկական վիճակի գնահատման և մնացորդային ռեսուրսի հիմնավորման» լրացուցիչ ծրագրերի մշակում:	30.04.2024 թ.
5.3.	Աշխատանքների իրականացում՝ ըստ «Հետազոտման, տեխնիկական վիճակի գնահատման և մնացորդային ռեսուրսի հիմնավորման» ծրագրերի:	ՊՆՎ-24 (01.08.2024 թ.) ՊՆՎ-25 (01.08.2025 թ.) ՊՆՎ-26 (01.08.2026 թ.)
5.4.	Տեխնիկական վիճակի և մնացորդային ռեսուրսի գնահատման ուղղությամբ կատարված աշխատանքների և ամրության հաշվարկների արդյունքների հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից էներգաբլոկի չփոխարինվող և չվերականգնվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորում:	01.05.2026 թ.
5.5.	Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի չվերականգնվող և չփոխարինվող տարրերի տեխնիկական վիճակի և մնացորդային ռեսուրսի վերաբերյալ եզրակացությունների մշակում:	01.08.2026 թ.
5.6.	Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի չվերականգնվող և չփոխարինվող տարրերի հետագա շահագործման հնարավորության, ժամկետների և պայմանների վերաբերյալ որոշումների մշակում:	01.08.2026 թ.
6.	Էներգաբլոկի անվտանգության և հուսալիության բարձրացմանն ուղղված միջոցառումների ներդրում	
6.1.	Անվտանգության 1-3 դասերին պատկանող այն տարրերի փոխարինում, որոնց ռեսուրսը մոտ է սպառվելուն և ենթակա չէ վերականգնման:	01.05.2026 թ.
6.2.	Հերմետիկ սենքերի կիպացում	01.08.2024 թ.
6.3.	ԳՇԽ ցանկացած մասում Դյ 200մմ համարժեք տրամագծով արտահոսքի փոխհատուցման համար անհրաժեշտ, հաշվարկային մեթոդով որոշված տեխնիկական միջոցառումների իրականացում (գործող ԱԳՎՀՀ-ի մոդիֆիկացիա):	01.05.2026 թ.

6.4.	Ռեակտորի իրանի և շոգեգեներատորների կոլեկտորների քայքայման հավանականության վերլուծությունների (ՔՀՎ) կատարում:	01.08.2024 թ.
6.5.	LBB հայեցակարգի կիրառելիության հիմնավորում՝ ԱԳՎՀՀ-ի կատարված մոդիֆիկացիայի հետ կապված և հաշվի առնելով ԱԳՎՀՀ-ի պլանավորվող մոդիֆիկացիան:	01.03.2025 թ.
6.6.	Արտահոսքի հայտնաբերման համալիր տեղեկատվական համակարգի (LDS) ընդլայնում LBB հայեցակարգի վերանայման արդյունքների հիման վրա:	01.06.2026 թ.
6.7.	Հայկական ԱԷԿ-ի՝ հրդեհային անվտանգության մասով արդիականացման միջոցառումների իրականացում (կատարվում է ՌԿ անվտանգ կանգի և հովացման, շրջակա միջավայր ճառագայթաակտիվ արտանետումների վերահսկման և տեղայնացման վրա հրդեհների ազդեցության վերլուծության արդյունքների հիման վրա):	01.05.2026 թ.
6.8.	2021 թվականին կատարված թրծաթողումից հետո շահագործման ընթացքում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ռեակտորի իրանի մետաղի հատկությունների վերահսկման ծրագրի իրականացում:	30.01.2025 թ.
6.9.	ԳԱԱ=0,42g-ով երկրաշարժի դեպքում սեյսմիկ անվտանգության գնահատման ծրագրի իրականացում:	01.04.2025 թ.
6.10.	Ըստ տեխնոլոգիական պարամետրների ՌԿ վերին մակարդակի պաշտպանությունների համակարգի: արդիականացում՝ փոխարինելով ռելեական սխեման միկրոպրոցեսորայինով:	01.10.2026 թ.
6.11.	ՎԿՓ կասետների շարժաբեռների փոխարինում:	01.09.2026 թ.
6.12.	ԳՇՊ ավտոմատիկայի համակարգի արդիականացում՝ փոխարինելով ռելեական սխեման միկրոպրոցեսորայինով:	01.06.2026 թ.
6.13.	ԲԿՎ և ԱԲՎ (БЦУ и ЦАО) տեխնիկական ազդասարքերի արդիականացում:	01.09.2026 թ.
6.14.	Պատահարների գրանցման համակարգի արդիականացում:	01.12.2026 թ.
6.15.	SԳ-3,4-ի վիբրացիոն վիճակի վերահսկման համակարգի ներդրում (գործողի փոխարեն):	01.09.2026 թ.

6.16.	2ԳՇՊ-1÷6-ի վիբրացիոն վիճակի վերահսկման համակարգի ներդրում:	01.09.2026 թ.
6.17.	Ռեակտորի կափարիչի տակից վթարային գազահեռացման համակարգի ներդրում:	01.09.2025 թ.
6.18.	Ռեակտորի հզորության ավտոմատ կարգավորման (APM) և տուրբինի կառավարման համակարգերի արդիականացում:	01.09.2026 թ.
6.19.	Նեյտրոնային հոսքի վերահսկման սարքվածքի (ԱՀՈՊ) համակարգի արդիականացում:	01.09.2025 թ.
6.20.	2ՇԳ-1-6-ի մակարդակի ավտոմատ կարգավորման համակարգի արդիականացում:	01.09.2025 թ.
6.21.	ԱԲՎ վրա առաջնային կերպափոխիչների և երկրորդային հսկիչ-չափիչ սարքերի (<2U) փոխարինում:	01.09.2025 թ.
6.22.	Վերբեռնման մեքենայի էլեկտրական մասի արդիականացում:	01.12.2025 թ.
6.23.	SԳ-3, SԳ-4, S-3, S-4 գեներատոր-տրանսֆորմատոր բլոկի և 23S և 24S սեփական կարիքների տրանսֆորմատորների պաշտպանության ռելեական սխեմայի արդիականացում՝ փոխարինելով այն միկրոպրոցեսորայինով (երկանցուղային տարբերակի):	01.09.2026 թ.
6.24.	ՃԿՎ անջատիչների փոխարինում էլեգազային անջատիչներով ռելեական հատվածամասերի հետ միասին՝ կիրառելով միկրոպրոցեսորային սարքեր՝ 3ՔԵ-1,2; 4ՔԵ-1,2 սեկցիաներում:	01.09.2026 թ.
6.25.	Օ,4 կՎ ավտոմատ անջատիչների փոխարինում ռելեական հատվածամասերի հետ միասին՝ կիրառելով միկրոպրոցեսորային սարքեր՝ 25ԵՈՈ, 26ԵՈՈ, 28ՈԱ, 29ՈԱ սեկցիաներում:	01.09.2026 թ.
6.26.	2Տր տրանսֆորմատորի 35կՎ եռաբևեռ սակավայուղային անջատիչի փոխարինում արտաքին տեղակայման էլեգազային անջատիչով:	01.09.2026 թ.
6.27.	ՊԱՕ-1,2,3,4 վթարային լուսավորության վահանների փոխարինում ժամանակակից վահաններով:	01.09.2026 թ.

6.28.	Լրացուցիչ վթարային հովացման (ДАР) համակարգի արդիականացում КРУН-6кВ արտաքին տեղակայման սեկցիաների և КТПН-0,4кВ կոմպլեկտային տրանսֆորմատորային ենթակայանի փոխարինման մասով:	01.09.2026 թ.
6.29.	«Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ռեակտորային կայանքի սարքավորումների և համակարգերի դասակարգչի» - 270.200Д4 (АО ОКБ «Гидропресс») և «Ատոմային էներգետիկայի բնագավառում անվտանգության վերաբերյալ ՆՏՓ-երի պահանջների համաձայն համակարգերի, տարրերի, սարքավորումների և կառույցների դասակարգչի» - գույք. №А-64420 НИИАЭП վերանայում:	01.03.2025 թ.
6.30.	<p>Հերմետիկ տարածքների (ГП) պաշտպանություն արտանախագծային վթարների (ЗПА) դեպքում ջրածնի պայթյունավտանգ կոնցենտրացիաների կուտակման կանխմամբ.</p> <ul style="list-style-type: none"> ▪ կատարել վերլուծություններ այնպիսի միջոցառումների մշակման նպատակով, որոնց ներդրումը կհանգեցնի ջրածնի պայթյունավտանգ կոնցենտրացիաների կուտակման սպառնալիքի նվազեցմանը, ▪ ներդնել պասիվ ավտոկատալիտիկ ռեկոմբինատորներ (PARs), ▪ վերանայել արտանախագծային և ծանր վթարների դեպքում ջրածնի պայթյունավտանգ կոնցենտրացիաների կուտակման սպառնալիքի նվազեցման ռազմավարությունը՝ այն ներառելով ԾՎԿԶ-ների (РУТА) մեջ, ▪ ներդնել ՀՍ-ում ջրածնի հայտնաբերման համակարգ՝ համապատասխան ռազմավարություններ կիրառելու նպատակով: 	<p>Կատարված է</p> <p>01.08.2026 թ.</p> <p>01.12.2026 թ.</p> <p>01.12.2025 թ.</p>
6.31.	ԳՇՊ յուղահամակարգի նոր նախագծի իրականացում:	01.12.2026 թ.
6.32.	<p>Նախատեսել օդափոխման համակարգերի սահափականների փակման ազդանշանի փոխանցումը ռեակտորի կափարիչի տակ գտնվող տարածքում ճնշման առկայության դեպքում:</p> <p>Հաշվարկների կատարում՝ կափարիչի տակ գտնվող տարածքում առկա ճնշումից սահափականների գործարկման (փակվելու) ճնշումը որոշելու նպատակով:</p> <p>Միջոցառման մշակում և ներդրում P-2 և B-2 օդափոխման համակարգերի սահափականների փակման բլոկավորվածքների գործարկման ալգորիթմի համար:</p>	01.06.2024 թ.

6.33.	<p>Հայկական ԱԷԿ-ում սարքավորումների ատեստավորման ծրագրի ներդրում:</p> <ul style="list-style-type: none"> - Ատեստացիոն տվյալներ չունեցող սարքավորումների ատեստավորման իրականացում: - Սարքավորումների ատեստավորման պահպանմանն ուղղված միջոցառումների ներդրում: 	<p>01.12.2026 թ. Մշտապես</p>
6.34.	<p>Վթարային կանգի վահանի (ՊԱՕ) և հետվթարային մոնիթորինգի համակարգի (ՇՄՄ) սրահների համար անձնակազմի կենսապահովման ինքնուրույն համակարգերի ներդրում:</p>	<p>01.12.2025 թ.</p>
6.35.	<p>A-013/2 սենյակում հրդեհների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների համալիրի որոշում՝</p> <ul style="list-style-type: none"> - ճնշամղման հատվածում ճնշման իջեցման դեպքում ԳՇՊ յուղապոմպերի անջատման սխեմայի հուսալիության բարձրացման համար, - հերմետիկ տարածքներում հրդեհի հայտնաբերման համակարգի ներդրման համար, - ԳՇՊ յուղապոմպերի ճնշամղման հատվածում յուղամուղից յուղի արտահոսքի հավանականության նվազեցման համար: 	<p>30.12.2026 թ.</p>
6.36.	<p>Յ-105 և Յ-119 սենյակներում ավտոմատ հրդեհաշիջման համակարգերի տեղակայման միջոցառման մշակում և ներդրում, ինչպես նաև Յ-105 և Յ-119 սենյակների միջև հակահրդեհային պատնեշների հուսալիության ստուգման և բարձրացման միջոցառման մշակում և ներդրում:</p>	<p>30.12.2026 թ.</p>
6.37.	<p>24 ժամվա ընթացքում ՇԳ ՍԴՊ (ԴՄՊ ՈՒ) համակարգի աշխատունակության հիմնավորում՝ հաշվի առնելով վառելիքի պաշարները, քիմիապես աղազերծված ջրի պաշարները և պոմպի երկարատև աշխատանքը:</p>	<p>31.12.2024 թ.</p>
6.38.	<p>Միջանկյալ ռելեների վահանի (ԱՄՊ) սենյակում (Յ-314/2) հրդեհի վաղ հայտնաբերման և հրդեհաշիջման միջոցառման մշակում:</p> <p>ՄՌՎ սրահում TP-26, TP-27 և AP-1 վահանների առանձնացմանն ուղղված միջոցառումների մշակում:</p>	<p>30.12.2026 թ.</p>
6.39.	<p>Մալուխային կիսահարկի Յ-202/9 և Յ-202/10 սենյակներում մալուխների ուղեգծման հստակեցում:</p> <p>Ռեակտորային և տուրբինային արտադրամասերի ստուգիչ մալուխների առանձնացման միջոցառումների մշակում:</p>	<p>30.12.2026 թ.</p>
6.40.	<p>Փրփրային հրդեհաշիջման պոմպերի (ՄՊՊ) և էլեկտրաֆիկացված սողնակների (ՅՓՅ) մալուխների ուղեգծման հստակեցում:</p>	<p>30.12.2026 թ.</p>

	Մալուխային թունելներում ՓՀՀՀ (СНПТ) բաղադրամասերի մալուխների լրացուցիչ հրդեհային պաշտպանության միջոցառումների մշակում:	
6.41.	Բորի հանգույցում հրդեհային ավտոմատիկայի տեղակայում՝ սարքավորումները հրդեհից պաշտպանելու նպատակով: Հակահրդեհային պատնեշների տեղակայում՝ բորի հանգույցում գտնվող անվտանգության համակարգերի տարրերի ֆիզիկական բաժանումն ապահովելու համար:	30.12.2026 թ.
6.42.	Պայթյունի հարվածային ալիքի, թռչող ապարատների և այլ թռչող առարկաների անկման սպառնալիքի հավանականության գնահատում: Տեղայնացնող համակարգերի պաշտպանիչ կոնստրուկցիաների՝ հարվածական բեռնվածքների նկատմամբ կայունության հաշվարկի կատարում:	01.12.2024 թ.
6.43.	ՆԿՎՇԸ-ների (COAЭП) լրակազմի վերջնամշակում՝ հաշվի առնելով ԱԳՎՀՀ-ի և սպրինկլերային համակարգի մոդիֆիկացիայի իրականացումը, և դրանց ներդրումը:	01.12.2024 թ.
6.44.	Վթարային հակազդման կենտրոնի նորոգում և սարքավորում: Վթարային հակազդման կենտրոնում անհրաժեշտ ընթացակարգերի, տեղակայման սխեմաների, կապի համակարգերի և օդափոխման համակարգերի առկայության ապահովում: Արտակարգ իրավիճակներում աշխատելու համար ռադիոլոգիական մոնիթորինգի հնարավորության ապահովում:	01.10.2024 թ.
6.45.	Հեղուկ ճառագայթասակտիվ թափոնների (ЖРО) անոթներ պարունակող սենյակներում առկա երեսպատվածքի ստուգման իրականացում՝ հերմետիկության աստիճանը որոշելու նպատակով: Ռեակտորային բաժանմունքի տեխնոլոգիական համակարգերի կամ ներծծիչ օդափոխման համակարգի տրակտներ արտաքին փոշու ներթափանցման ուղու որոշում:	01.12.2025 թ.
6.46.	Ծանր վթարների կառավարման ժամանակ օգտագործվող սարքավորումների պահպանվածության և աշխատունակության հաշվարկային հիմնավորման իրականացում: Վատագույն եղանակային պայմանների դեպքում արտանախագծային վթարների և ծանր վթարների ժամանակ բնակչության պարտադիր տարհանման միջոցառումների և պլանավորման գոտիների չափերի որոշում: Հայկական ԱԷԿ-ում արտանախագծային և ծանր վթարների դեպքում բնակչության պաշտպանության տեխնիկական և/կամ կազմակերպչական միջոցառումների կոմպլեքսի լրամշակում:	01.06.2024 թ.

	ԾՎԿԶ-ների լրամշակում՝ հաշվի առնելով Հայկական ԱԷԿ-ում իրականացված արդիականացումները, և դրանց ներդրումը:	
6.47.	«ՀԱԷԿ» ՓԲԸ-Պահուստային ճգնաժամային կենտրոնի (ՊՃԿ) կառուցում:	2024-2025 թթ.
6.48.	«ՀԱԷԿ» ՓԲԸ, ՇՊ-3,4-շրջանառու պոմպերի ճնշումային խողովակաշարերի փոխարինում՝ սկսած հակադարձ կափույրներից, այդ թվում թիվ 2 հովացման աշտարակի ներսում՝ նրանց կոշտության օղերով, փոխհատուցիչներով, կցախողովակներով և հենարաններով:	30.11.2024 թ.
6.49.	Կապի համակարգի արդիականացում, այդ թվում. - օպերատիվ կապի համակարգի (ՕԿՀ) ձեռքբերում: Սարքավորումների ձեռքբերում, մոնտաժում, կարգաբերում և 2 մասնագետների ուսուցում, - ձեռքբերում, տեղակայում, կարգաբերում և 2 մասնագետների ուսուցում ավտոմատ թվային կոմուտատորի համար, - խորհրդակցություններ անցկացնելու համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում. տիպը՝ CCS-900 ULTRA (CCS-ULTRA):	01.10.2025 թ.
7.	Էներգաբլոկի համակարգերի (տարրերի) փորձարկումներ	01.05.2026 թ.
8.	Էներգաբլոկի Անվտանգության պարբերական դիտարկման հաշվետվության մշակում	
8.1.	Անվտանգության պարբերական դիտարկման իրականացման ծրագրի պատրաստում և համաձայնեցում ՀՀ ՄԱԿ Կոմիտեի հետ:	01.01.2024 թ.
8.2.	1. Անվտանգության պարբերական դիտարկման իրականացում: 2. Անվտանգության պարբերական դիտարկման վերաբերյալ հաշվետվության անկախ փորձաքննության անցկացում:	01.04.2025 թ.
8.3.	Անվտանգության պարբերական դիտարկման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ՀՀ ՄԱԿ Կոմիտե:	01.06.2025 թ.
9.	ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 23-ի N° 1085-Ն որոշման «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանը ներկայացվող պահանջները» հավելվածի կետ 35-ի (ենթակետեր 1÷4) վերաբերյալ հաշվետվությունների տրամադրում ՀՀ ՄԱԿ Կոմիտեի պահանջներին համապատասխանող ձևով և բովանդակությամբ (կետ 48)՝ լրացուցիչ ժամանակահատվածում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման թույլտվություն ստանալու նպատակով:	01.06.2026 թ.

1. Հավելված 2-ի 6.10÷6.16, 6.18÷6.28, 6.31 և 6.34 կետերում նշված միջոցառումները բաղկացած են հետևյալ փուլերից՝
 - ⇒ տեխնիկական պահանջի մշակում,
 - ⇒ անվտանգության հիմնավորման մշակում,
 - ⇒ նախագծահետազննական աշխատանքներ,
 - ⇒ շին-մոնտաժային աշխատանքներ,
 - ⇒ գործարկման-կարգաբերման աշխատանքներ:
2. Հավելված 2-ի 6.17 կետում նշված միջոցառումը բաղկացած է հետևյալ փուլերից՝
 - ⇒ անվտանգության հիմնավորման մշակում,
 - ⇒ շին-մոնտաժային աշխատանքներ,
 - ⇒ գործարկման-կարգաբերման աշխատանքներ:
3. Հավելված 2-ի 6.35, 6.36 և 6.38-6.41 ենթակետերում նշված միջոցառումները կհստակեցվեն և կկոնկրետացվեն Հավելված 2-ի 2.6 կետում նշված «ՌԿ անվտանգ կանգի և հովացման, շրջակա միջավայր ճառագայթաակտիվ արտանետումների վերահսկման և տեղայնացման վրա հրդեհների ազդեցության վերլուծության մշակում» միջոցառման իրականացման ժամանակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ